նուի և իր սեփական Մեկնութիւնք խորագրով ձեռագիրին մէջ կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «Ցիշատակ է գրչուկս Պետրոս Բերիացի բանասիրի, ի թվին ՌՃԽ և Թ-ին (=1700) ի առաջնորդութեան Կարկառ քաղաքին. ստացայ ի Հասան մասուր նահանգին, ի թվին ՌՃԾԷ (=1708) եղև կաթողիկոս ի Սիս քաղաքին և ի թվին ՌՃԾԹ (=1710) եկն Բերիա քաղաքն և բազում անցք անցին ընդ իս. Աստուած զվերջն բարին կատարեսցէ»։ (Հայկ. Ցուց. Թ. 127)։ Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, ուր կը վախճանի 1728ին և կը թաղուի Ս. Փրկչի վանքը. տապանագիրն է հետեւեալը. «Այս է տապան Պետրոս կաթողիկոսին Կիլիկիոյ որ փոխեցաւ առ Տէր ի թվ. ՌՃՀԷ (=1728), ամէն». (տե՛ս նաև Սաւալան, էջ 1472)։ Իր տուած յիշատակի մասին տեսնել (ՄՁ. Թ. 532)։

ՊԵՏՐՈՍ ԳՈՒԼԷԼԻԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— 1758ին Ս. Յակոբի վանքին կը նուիրէ ոսկիէ սկիհ մը, ի յիշատակ իր ննջեցելոց։ (Ցուց. Պ.)։

ՊԵՏՐՈՍ (ԽՕՃԱՑ) ՋՈՒՂԱՑԵՑԻ.— Ս. Յակոբի վանքին կը նուիրէ Աւետարան մը (ՄՁ. Թ. 1938) 1611ին ընդօրինակուած, որուն յիշատակարանէն կը քաղենք հետեւեալը. «. . . հեզահոգի մահտեսի խօջայ Պետրոսն ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն Աղուպին, և մօրն Մերուվին և կողակցին իւրոյ Թուրիկին, և զաւակացն Սուլթանափուսին, Գուզալին, Սուեսիին, Առաքելին, Հերապետին, Սիմոնին, Զուանիկին և եղբարցն Սահակին և հանգուցեալ կողակցուն Սուլթանփաշին և դստերն Միմիրին և որդւոյն Խաչատուրին, Ծատուրին և հանգուցեալ եղբօրն Մոխսին, և կողակցուն Բահարին, Մկրտչին, Առաքելին, Մարտիրոսին, Խաբունին և հոգևոր եղբօրն Դաւիթին և կողակցուն իւրոյ Մեր տատիկին և որդւոյն Մուրատին, Աստուածատուրին և դստերն Սալտարիխանին և եղբաւրն Խիրխիրին, Սուրիասին և Զանիփուսին և եղբաւրն Բարսղիասին և մաւրն Թանամին, եւ Պետրոսի հաւրեղբաւրն Անդրեասին, և կողակցուն Շահզատին և միւս հաւրեղբօրն Մերջուրաթին և կողակցուն Սուլթան փաշին. . . . . Ցիշատակ է սուրբ աւետարանս ի սուրբ քաղաքն Երսղմ. ի դուռն Ս. Յակոբայ Զուղայեցի խօճա Պետրոսէն . . .»։ (Խաչ. Ցուց.